Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-881-09.07.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. *«Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքի 15-րդ հոդվածում՝*

1) վերնագրից հանել «ու հաշվառման համար վճարի սահմանումը և վճարման» բառերը,

2) 2-6-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Ներմուծվող սննդամթերքի ու կենդանական ծագման մթերքի զննման ու ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման համար սահմանված վճարի մասով մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձն իրականացվում է՝ վճարողի կամ նրա իրավահաջորդի դիմումի համաձայն, եթե այն ներկայացվել է ֆինանսական մարմին (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն)՝ պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում: *Սույն մասի իմաստով պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձնելու իրավունքի առաջացման օր է համարվում ավել վճարելու կամ ավել գանձելու օրը, ամիսը, տարին:*

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նշված պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարները վերադարձնելու մասին դիմումին կցվում են օրենքով սահմանված վճարի վճարումը հավաստող փաստաթղթերը, ինչպես նաեւ տվյալ վճարը

գանձած մարմնի տեղեկանքը՝ պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարները վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին, եթե՝

1) պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարներն առաջացել են մինչեւ 2023 թվականի փետրվարի 28-ը ներառյալ, ապա Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա,

2) պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարներն առաջացել են 2023 թվականի փետրվարի 28-ից հետո՝ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը, ապա Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրվող տեղեկանքի հիման վրա:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների մասին

~~*Առաջին*~~ *Երկրորդ ընթերցում*

Կ-881-09.07.2024-ՏՀ-011
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~***Հոդված 1.*** «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 2-ից 6-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:~~

Հոդված 1. «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-143-Ն օրենքի 15-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «ու հաշվառման համար վճարի սահմանումը և վճարման» բառերը,

2) 2-6-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. ~~**Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ**~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Ներմուծվող սննդամթերքի ու կենդանական ծագման մթերքի զննման ու ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման համար սահմանված վճարի մասով մինչեւ սույն ~~Ս~~օրենքի ուժի մեջ մտնելը պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձն իրականացվում է՝ վճարողի կամ նրա իրավահաջորդի դիմումի համաձայն, եթե այն ներկայացվել է ֆինանսական մարմին (Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն)՝ պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում: Սույն մասի իմաստով պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձնելու իրավունքի առաջացման օր է համարվում ավել վճարելու կամ ավել գանձելու օրը, ամիսը, տարին:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նշված պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարները վերադարձնելու մասին դիմումին կցվում են օրենքով սահմանված վճարի վճարումը հավաստող փաստաթղթերը, ինչպես նաեւ տվյալ վճարը գանձած մարմնի տեղեկանքը՝ պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարները վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին, եթե՝

1) պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարներն առաջացել են մինչեւ 2023 թվականի փետրվարի 28-ը ներառյալ, ապա Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված տեղեկանքի հիման վրա,

2) պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարներն առաջացել են 2023 թվականի փետրվարի 28-ից հետո՝ մինչեւ սույն ~~Ө~~օրենքն ուժի մեջ մտնելը, ապա Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրվող տեղեկանքի հիման վրա:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-881-09.07.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1	ՀՀ կառավարություն	**Հոդված 1**	Նախագծի 1-ին հոդվածով ուժը կորցրած են ճանաչվում «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-ից 6-րդ մասերը, որոնք վերաբերում են ներմուծվող սննդամթերքի և (կամ) կենդանական ծագման մթերքի զննման եւ ուղեկցող փաստաթղթերին համապատաս-խանության որոշման ու հաշվառման համար տնտեսավարող սուբյեկտից գանձվող վճարին: Օրենքի 15-րդ հոդվածը վերնագրված է՝ «Ներմուծվող սննդամթերքի եւ կենդանական ծագման մթերքի զննման եւ ուղեկցող փաստաթղթերին համապատաս-խանության որոշման ու հաշվառման համար վճարի սահմանումը և վճարման կարգը»: Հիմք ընդունելով Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխությամբ վճարման կարգին վերաբերող իրավակարգավորում-ների ուժը կորցրած ճանաչելու հանգամանքը, անհրաժեշտություն է առաջանում խմբագրել օրենքի 15-րդ հոդվածի վերնագիրը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ հոդվածների վերնագրերը պետք է	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 15-րդ հոդվածի վերնագրից հանվել են «ու հաշվառման համար վճարի սահմանումը և վճարման» բառերը:	Ընդունվել է:

			համապատասխանեն հոդվածների բովանդակությանը:		
2.	ՀՀ կառավարություն	**Հոդված 1, Հոդված 2**	Նախագծի 1-ին հոդվածում «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքին տրվել է կրճատ անվանում՝ «(այսուհետ՝ Օրենք)»: Մինչդեռ Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասում և 3-րդ մասի 2-րդ կետում կիրառված «սույն Օրենք» ձևակերպումը կարող է անհստակություն առաջացնել «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի և «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի տարանջատման տեսանկյունից: Հետևաբար՝ Նախագծում կիրառված հղումների հստակությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է «սույն Օրենք» ձևակերպումները փոխարինել «սույն օրենք» ձևակերպմամբ:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածից հանվել են «(այսուհետ՝ Օրենք)» բառերը, իսկ 2-րդ հոդվածի 2-րդ մասում և 3-րդ մասի 2-րդ կետում «սույն Օրենք» ձևակերպումները փոխարինվել են «սույն օրենք» ձևակերպմամբ:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	**Հոդված 2**	Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկվում է հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը՝ օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրը հանվել է:	Ընդունվել է:
4"	ՀՀ կառավարություն	**Հոդված 2**	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ներմուծվող սննդամթերքի ու կենդանական ծագման մթերքի զննման ու ուղեկցող փաստաթղթերին համապատասխանության որոշման ու հաշվառման համար սահմանված վճարի մասով մինչև սույն Օրենքի ուժի մեջ մտնելը պարտավորությունից ավել վճարված կամ	Ընդունվել է: Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ նույն մասի իմաստով պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձնելու իրա-	Ընդունվել է:

			ավել գանձված վճարի գումարների վերադարձն իրականացվում է՝ վճարողի կամ նրա իրավահաջորդի դիմումի համաձայն, եթե այն ներկայացվել է ֆինանսական մարմին՝ պարտավորությունից ավել վճարված կամ ավել գանձված վճարի գումարների վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից երեք տարուց ոչ ուշ ժամկետում: Անհրաժեշտ է հստակեցնել վերադարձնելու իրավունքի առաջացման օրը:	վունքի առաջացման օր է համարվում ավել վճարելու կամ ավել գանձելու օրը, ամիսը, տարին:	